«Հաստատում եմ»

Հայաստանի շախմատի ֆեդերացիայի նախագահի

Առաջին տեղակալ Ս. Էպուտյան

Հայաստանի պատանիների և աղջիկների կայծակնային շախմատի առաջնության

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի պատանիների և աղջիկների կայծակնային շախմատի առաջնությունը կանցկացվի Երևանում՝ Հայաստանի շախմատի ակադեմիայում (Շևչենկո 34), 2026 թվականի **մարտի 20-ին ժամը 15:00-ին**, ըստ հետևյալ տարիքային խմբերի՝

Տղաներ

Ա. մինչև 8 տարեկան շախմատիստներ,

Բ. մինչև 10 տարեկան շախմատիստներ,

Գ. մինչև 12 տարեկան շախմատիստներ,

Դ. մինչև 14 տարեկան շախմատիստներ,

Ե. մինչև 16 տարեկան շախմատիստներ,

Զ. մինչև 18 տարեկան շախմատիստներ,

Աղջիկներ

Ա. մինչև 8 տարեկան շախմատիստուհիներ,

Բ. մինչև 10 տարեկան շախմատիստուհիներ,

Գ. մինչև 12 տարեկան շախմատիստուհիներ,

Դ. մինչև 14 տարեկան շախմատիստուհիներ,

Ե. մինչև 16 տարեկան շախմատիստուհիներ,

Զ. մինչև 18 տարեկան շախմատիստուհիներ,

**Մասնակիցների քիչ քանակի դեպքում խմբերը կմիացվեն:*

Բոլոր մրցաշարերը կանցկացվեն շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով:

Հայաստանի պատանիների և աղջիկների կայծակնային շախմատի առաջնությունը համարվում է ընտրական փուլ Եվրոպայի արագ և կայծակնային շախմատի մրցաշարերի համար:

Մրցաշարերում 1-ից 3-րդ տեղերը զբաղեցրած մասնակիցները կպարգևատրվեն մեդալներով և պատվոգրերով:

Հավասար միավորներ վաստակելու դեպքում բոլոր մրցաշարերում տեղերը կորոշվեն ըստ լրացուցիչ ցուցանիշների՝

1. Հատված Բուխհոլց (2023),
2. Բուխհոլց (2023),
3. Անձնական հանդիպման արդյունք,
4. Սև գույնի խաղաքարերով խաղացած պարտիաների առավելագույն քանակ:

Առաջնության յուրաքանչյուր խմբի 1-ից 6-րդ տեղերը զբաղեցրած շախմատիստները իրավունք կստանան սեփական միջոցների հաշվին մասնակցելու Եվրոպայի պատանիների արագ և կայծակնային շախմատի առաջնությանը, որը տեղի է ունենալու 2026 թվականի հուլիսի 6-ից 10-ը Լեհաստանի Ժեշուվ քաղաքում:

Հայաստանի պատանիների և աղջիկների շախմատի առաջնության եզրափակիչ մրցաշարի մասնակիցները նույնպես իրավունք ունեն սեփական միջոցների հաշվին մասնակցելու Եվրոպայի արագ և կայծակնային շախմատի առաջնությանը:

<u>Մասնակիցներ</u>

Մրցաշարին իրավունք ունեն մասնակցելու այն շախմատիստները, ովքեր ունեն՝

Տղաներ

Ա. մինչև 8 տարեկան շախմատիստներ առնվազն IV,

Բ. մինչև 10 տարեկան շախմատիստներ առնվազն III,

Գ. մինչև 12 տարեկան շախմատիստներ առնվազն II,

Դ. մինչև 14 տարեկան շախմատիստներ առնվազն I,

Ե. մինչև 16 տարեկան շախմատիստներ ազգային վարկանիշ,

Զ. մինչև 18 տարեկան շախմատիստներ ազգային վարկանիշ,

Աղջիկներ

Ա. մինչև 8 տարեկան շախմատիստուհիները առնվազն IV,

Բ. մինչև 10 տարեկան շախմատիստուհիներ առնվազն IV,

Գ. մինչև 12 տարեկան շախմատիստուհիներ առնվազն III,

Դ. մինչև 14 տարեկան շախմատիստուհիներ առնվազն II,

Ե. մինչև 16 տարեկան շախմատիստուհիներ առնվազն I,

Զ. մինչև 18 տարեկան շախմատիստուհիներ ազգային վարկանիշ,

Տղաների մինչև 14, 16 ,18 և աղջիկների մինչև 18 խմբերում կհաշվարկվի միջազգային վարկանիշ:

**Այդ խմբերում ՖԻԴԵ-ի նույնականացման համար ունենալը պարտադիր է (FIDE ID):*

***ՖԻԴԵ-ի նույնականացման համար կարող եք ձեռք բերել այցելելով chessfed.am կայք՝ գրացվել բաժին:*

Ժամակարգ

5 րոպե մինչև խաղի ավարտը՝ յուրաքանչյուր քայլի համար 3 վայրկյան հավելումով:

Մուտքավճար

Հայաստանի պատանիների և աղջիկների կայծակնային շախմատի առաջնության մուտքավճարը **4 000 ՀՀ դրամ է**:

Հայաստանի պատանիների և աղջիկների կայծակնային շախմատի առաջնության գրանցման **վերջնաժամկետն է 2026թ. մարտի 18-ը ժամը 18:00-ն:**

Գրանցվել կարող եք այցելելով Հայաստանի շախամատի ֆեդերացիայի պաշտոնական կայք, գրանցվել բաժին՝ հետևյալ հղմամբ https://www.chessfed.am/am:

Հարցերի դեպքում զանգահարել՝ +374 99/10 440105

Գլխավոր մրցավար

Միջազգային մրցավար՝ Գևորգ Մուրադյան